# ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N 24**

ք. Կապան «11» հունվարի 2021թ

*ՀՀ Սյունիքի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի*, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ դրամաշնորհի տրամադրող), մի կողմից և «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն , որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ դրամաշնորհի ստացող), մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պահպանման ծախսերի համար հատկացնում է 14914500 /Տասնչորս միլիոն ինը հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն՝ 2485750 ՀՀ դրամ :

## 2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :

2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:

2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի գանձապետական հաշվին:

## 3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2021թ.:

4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:

4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5.Կողմերի իրավաբանական հասցեները

**Դրամաշնորհի տրամադրող**

ՀՀ Սյունիքի մարզպետարան

Ք.Կապան Նժդեհի
ՀՀ ֆին.նախ. գործառն. վարչ.
հ/հ 900311141023
հհվհ 094153..

Է. Մարտիրոսյան

**Դրամաշնորհի ստացող**

«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ

Ք. Կապան
ՀՀ ֆին նախ. գործառն. վարչ.
հհ 900318..0024
հհվհ 09408106